ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

30.09.2020թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 95-99 հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2020 թվականի մայիսի 25-ի թիվ 407-Ա որոշումը՝

ՀՀ Լոռու մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ Ալիկ Սահակյանի (հանձնաժողովի նախագահ), ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի ավագ մասնագետ Լիլիթ Քոչարյանի, հաշվապահական հաշվառման բաժնի պետ Արտավազդ Բեջանյանի, ֆինանսատնտեսագիտական բաժնի ավագ մասնագետ Լուսինե Պապյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Էդգար Հախվերդյանի, քաղաքաշինության վարչության ավագ մասնագետ Արման Մխիթարյանի, զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Սպարտակ Ղուբաթյանի, քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի ավագ մասնագետ Վահրամ Դանիելյանի, սոցիալական ապահովության բաժնի պետ Վալերի Ջաղինյանի, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ավագ մասնագետ Անի Ղազարյանի, բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Սամվել Խառատյանի, գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ Արմեն Գասպարյանի, կրթության բաժնի գլխավոր մասնագետ Անահիտ Բարոյանի, մշակույթի և սպորտի բաժնի ավագ մասնագետ Ռուբեն Մխիթարյանի և մարզպետարանի փորձագետ Լևոն Բերոյանի կողմից իրականացվեց իրավական և մասնագիտական հսկողություն ՀՀ Լոռու մարզի Մարգահովիտ համայնքում՝ ՏԻՄ-երի լիազորությունների, ֆինանսների, հողօգտագործման, կոմունալ տնտեսության, պաշտպանության, տրանսպորտի, սոցիալական պաշտպանության, շրջակա միջավայրի պահպանության, գյուղատնտեսության, անասնաբուժության և բուսասանիտարիայի, կրթության և մշակույթի բնագավառներում, ինչպես նաև Մարգահովիտի կրթամարզամշակութային համալիրի Ս.Անանյանի անվան նախակրթարանում:

1. Իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Նշումներ /համայնքի ղեկավարի առարկությունները իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների և իրավական և մասնագիտական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/

---

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Լոռու մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Մարգահովիտ համայնքի ղեկավարին:

Ալիկ Սահակյան _____

Լիլիթ Քոչարյան _____

Արտավազդ Բեջանյան _____

Լուսինե Պապյան _____

Էդգար Հախվերդյան

Արման Մխիթարյան

Սպարտակ Ղուբաթյան

Վահրամ Դանիելյան

Վալերի Ջաղինյան

Անի Ղազարյան

Սամվել Խառատյան

Արմեն Գասպարյան

Անահիտ Բարոյան

Ռուբեն Մխիթարյան

Լևոն Բերոյան

Համայնքի ղեկավար՝
Սամվել Անանյան